

ՄԽԻԹԱՐԵԱՆՆԵՐԸ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ

Որ Մխիթարեանները մեծ նշանակութիւն էին տալիս թարգմանութեանը, երեւում է թէկուզ միայն այն փաստից, որ նրանք 1889ին տպագրեցին Հայր Գարեգին Զարբհանալեանի «Մատենագրութիւն թարգմանութեանց նախնեաց» հատորը, որը ընդգրկում էր գիւտից մինչեւ 13-րդ (ԺԳ) դարն արուած թարգմանութիւնները: Նախ ասենք, որ այդ գիւրքը իր տեսակի մէջ միակն է մեր գրականութեան մէջ, այսինքն, առ այժմ միայն Մխիթարեաններն են իրենց առաջ այդպիսի խնդիր դրեն՝ ստեղծել հայոց կատարած թարգմանութիւնների մատենագիտութիւնը (առանց որի հնարաւոր չէ ստեղծել հայոց թարգմանութեան պատմութիւնը): Ափսոս որ Հայր Զարբհանալեանը չկարողացաւ աւարտել իր մատենագիտութիւնը. բայց շատ կարեւոր գործ էր սկսել: Այսպէս թէ այնպէս, Մխիթարեանները այս ասպարէզում եւս վարում էին մտածուած քաղաքականութիւն, գիտակցելով, որ առանց թարգմանութիւնների հնարաւոր չէ առաջ տանել եւ մշակոյթը: Եւ պացանկացած ժողովրդի լրսաւորութիւնը եւ մշակոյթը: Եւ պատահական չէ, որ նրանց տպագիր ժառանգութեան մէջ թարգմանութիւններն այդքան մեծ տեղ են գրաւում: Մխիթարեան պարբերականները եւս՝ «Բազմավէպը», վիեննացիների «Եւրոպան», մեծ դեր են խաղացել նրանց թարգմանական աշխատանքների մէծ դեր են խաղացել նրանց թարգմանական աշխատանքների մէծ դեր են տրամադրել, համարից համար տպագրել Մխիթարեան հայրերի եւ ուրիշների կատարած թարգմանութիւնները:

Ի՞նչ եւ ինչպէս են թարգմանել Մխիթարեանները: Ասենք միանգամից, որ իրենց թարգմանական քաղաքականութիւնը մշակելիս նրանք գործել են իրեւ հոգեւորականներ, այն էլ քրիստոնէական եկեղեցու մի որոշակի ճիւղին ծառայող հոգեւորականներ: Սա իրողութիւն է՝ պայմանաւորուած պատմական

հանգամանքներով, եւ այս իրողութիւնը պարզապէս պէտք է նկատի ունենալ, առանց Մխիթարեանների արածը որեւէ կերպ արժեզրկելու միտումի: Եւ նրանց թարգմանած գործերում մենք չենք կարող փնտռել ԺԹ դարի եւրոպական գրականութեան այնպիսի երկեր, որոնք հակասում էին նրանց կոչումին եւ պատկերացումներին: Այս հանգամանքը, անկասկած, սահմանափակում էր Մխիթարեանների գործունէկութեան ասպարէզը. Բայց մենք չենք կարող այսօր նրանցից պահանջել, որ նրանք մտածէին Նալբանդեանի եւ միւսների պէս: Դա կը լինէր հակապատմական մօտեցում (որը նախորդ տասնամեակներում դրաեւորուել է): Թէեւ, պէտք է ասեմ, որ իրենց թարգմանութիւններով Մխիթարեանները արձագանքել են նաեւ ժամանակի ամենայուղող հարցերին, իսկապէս առաջադիմական գաղափարներին (յիշենք Հարրիետ Բիչեր Սթոուի «Քեռի Թոմասի Խրճիթը» վէպի, Բայրոնի եւ Զիւգոյի գործերի նրանց թարգմանութիւնները): Բայց սա չէ, որ պէտք է չափանիշ դառնայ նրանց գործունէկութեան գնահատման համար: Մենք պէտք է պարզենք, թէ ինչ են նրանք արել իրենց կրօնական պատկերացումների եւ հնարաւորութիւնների սահմաններում ազգային մշակոյթի եւ առաջին հերթին գրականութեան եւ բանասիրութեան զարգացման համար: Պատմական մօտեցման առաջին պահանջն այս է:

Ընդհանուր առմամբ, այս դիրքերից պէտք է քննել նաեւ գրաբարի ինդիրը նրանց թարգմանութիւններում: Այո, Մխիթարեանները պահպանողականներ էին, սա էլ է պատմութեամբ պայմանաւորուած իրողութիւն, եւ սա էլ, դժբախտաբար, երբեմն բաւական զգալիօրէն սահմանափակել է Մխիթարեանների հնարաւորութիւնները հայկական մշակութային կեանքի վրայ ազգելու հնարաւորութիւնները: Դեռ 1860-ականներին, Աքովեանի վէպի տպագրութիւնից, «Հիւսիսափայլի» եւ «Մեղուի» գործունէկութիւնից յետոյ, Մխիթարեանները յամառօրէն շարունակում էին հաւատալ գրաբարի վերադարձին եւ տպագրում էին գրաբար գրքեր ու գրաբարով կատարում թարգմանութիւններ: Այս բոլորով հանդերձ, մենք պէտք է ընդունենք, որ Մխիթարեանները իրենց գրական բանասիրական գործունէկութեամբ եւ, մասնաւորապէս, թարգմանութիւններով, զգալիօրէն առաջ մղեցին մեր գիրն ու գրականութիւնը, մեր գրական մշակոյթը:

Եւ ուրեմն, ի՞նչ են թարգմանել Մխիթարեանները։ Նախ ասենք, որ նրանց թարգմանութիւնները բաւական լայն բնագաւառ են ընդգրկում՝ կրօնագիտական երկեր, եկեղեցու հայրերի գրուածքներ, գեղարուեստական գրականութիւն, իմաստասիրութիւն եւ բարոյախօսութիւն, պատմութիւն եւ մարդկայնական (հումանիտար) մտածողութեան այլ բնագաւառներ (թէեւ նրանց խորթ չի եղել նաեւ բնական գիտութիւնների ասպարհող, մանաւանդ աշխարհագրութիւնը)։ Նրանց թարգմանական նախասիրութիւնները, անկասկած, պայմանաւորուած էին նրանց դասական գեղագիտութեամբ (որն արդէն բաւականաչափ ուսումնասիրուած է մեր գրականագիտութեան մէջ)։ Սա նշանակում է, որ Սուրբ Ղազարի հայրերի հայեացքը ուղղուած էր առաջին հերթին նախնեաց աշխարհին։ Նրանք թարգմանուած են հին յունական եւ հռոմէական գրականութեան նշանաւոր գործերը։ Օրինակ, դեռ 1814 թ. Վենետիկում տպագրուում է մի հատուած «Իլիականից» Արսէն Բագրատունու թարգմանութեամբ։ Նոյն թուականին Արսէն Բագրատունին լատիններէնից թարգմանուած է Վիրգիլիոսի եւ Կատուլլոսի գործերը։ Պարզ է, որ Բագրատունու թարգմանչական հետաքրքրութիւնները սերտօրէն կապուած էին իր սեփական գրական ստեղծագործութեան հետ, «Հայկ դիւցազն»ը չէր գրուի առանց նախնեաց գրականութեան հետ «Հայկ դիւցազն»ը չէր գրուի առանց նախնեաց գրականութեան հետ թարգառուած ծանօթութեամբ։ Նախնեաց գրականութիւնը միշտ մնաց Մխիթարեանների ուշադրութեան կենտրոնում, Բագրատունին ամբողջացրեց «Իլիականի» իր թարգմանութիւնը (1864), 1845-ին հրատարակուեց Վիրգիլիոսի «Ենչականը» եղուարդ Հիւրմիւզեանի թարգմանութեամբ։ 1847-ին Արսէն Բագրատունու թարգմանութեամբ լոյս է տեսնում Վիրգիլիոսի «Մշակականքը», 1848-ին՝ «Ողիսականը»։ Եղիա Թովմանանի թարգմանութեամբ։ Մխիթարեանների արածի արժէքը ճիշտ թարգմանութեամբ։ Մխիթարեանների արածի արժէքը ճիշտ գնահատելու համար ասեմ, որ մինչեւ այսօր մենք չունենք Վիրգիլիոսի գործերի արեւելեան աշխարհաբար թարգմանութիւննեգիլիոսի գործերի միշտ արածի արածելու համար ասեմ, որ մինչեւ այսօր մենք չունենք Վիրգիլիոսի գործերի թարգմանը։ Վիրգիլիոսի «Զուգակշիռքը» (համեմատայշատակենք նաեւ Պլուտարքոսի «Զուգակշիռքը» (համեմատական կենսագրութիւններ) վեց հատորով (հրատարակուել է 1832-1834 թթ)։ Թարգմանիչն է Մխիթարեան հայրերից Եղիա Թովմանանը։ Ասեմ, որ այս դասական երկի նորօրեայ աշխարհաբար թարգմանութեանը հայ ընթերցողն սպասեց տասնամեակ-

ներ, եւ լիակատար թարգմանութիւնը մինչեւ այսօր չունենք. ահա թէ որտեղ ես ափսոսում, որ Մխիթարեանները շատ են տարուել գրաբարով: Յիշենք նաեւ Կիկերոնի, Սենեկայի եւ այլոց գործերի թարգմանութիւնները:

Նախնեաց գրականութեան երկերի թարգմանութիւնների առիթով թուոցիկ կանգ առնենք թարգմանութեան համար շատ կարեւոր մի խնդրի վրայ: Ինչպէս վերարտադրել Հոմերոսի հոչակաւոր վեցաչափը (հեկզամետը): Նման խնդիրներ շատ էին կանգնում Մխիթարեանների առաջ, եւ նրանք չեն շրջանցել դրանք, աշխատելով միշտ գտնել ճիշտ լուծումներ: Բերեմ մի փոքրիկ հատուած «իլիականի» թարգմանութեան համար Հայր Բագրատունու գրած առաջաբանից. «Քերթուածքն երկոքին թարգմանեցան յառաջ քան զմեզ եւ ի լոյս ելին նոյնավանկ եւ նմանայանդ տաղաչափութեամբ, դարուցն վերջնոց: Սակայն առ ի մերկանալ զմիտս մեր եւ զյոգունց բանասիրաց ազգայնոց, յանձն առաք զիջանել ի հայցուածս նոցին եւ նորոգ յեղեալ ի հայ զիլիականն մերով այժմ ծանօթ դիւցազնական չափով նախնեացս, որպէս եւ խնդրէինն եւ նովին հելենացի հին պարզութեամբ եւ բնական ճշգրտութեամբ բնագրին ըստ կարի լեզուիս եւ չափոցս»: Զափազանց հետաքրքրական դատողութիւն, որն ուղղակիօրէն առընչւում է գեղարուեստական թարգմանութեան կարեւորագոյն խնդիրներին: Նախ, ուշադրութիւն դարձնենք բնագրին հարազատ լինելու ընդգծուած հոգսին: Միաժամանակ, շատ հետաքրքրական է չափի խնդրին տուած լուծումը՝ «նախնիների դիւցազնական չափով»: Անկախ այն բանից, թէ այսօրուայ թարգմանիչները ինչպէս կամ ինչքանով են կիրառում այդ չափը, սա այն է, ինչ անուանում է հարցի ստեղծագործական լուծում:

Մխիթարեանների թարգմանութիւններում զգալի տեղ են գրաւում դասական հեղինակների երկերի թարգմանութիւնները: Նրանց ուշադրութիւնը, բնականաբար, գրաւել է Պիեռ Կոռնելի «Պոլիկտոս» ողբերգութիւնը, որի բովանդակութիւնը կապուած է հայոց պատմութեան հետ. այդ գործը թարգմանել է Գէորգ Զիւրմիլեկանը (1858): Թարգմանուել են նաեւ Ռասին, Լամարթին եւ ուրիշներ:

Վերջապէս, Մխիթարեանների ուշադրութիւնից չեն վրիպել նաեւ իրենց ժամանակակից եւրոպական բանաստեղծները՝ եւ

արձակագիրները՝ Շէնյէ, Հիւգոյ, Բայրոն, Հայնէ, Պրոսպեր Մերիմէ եւ այլք:

Թարգմանութիւնների աշխարհագրական ընդգրկումն էլ բաւական մեծ է եղել: Զեն խուսափել նաեւ Արեւելքի բանաստեղծներին թարգմանելուց, նոյնիսկ չին բանաստեղծի են թարգմանել, ճիշտ է, անդեւքնից: Բայց ընդհանուր առմամբ նրանց ուշադրութիւնը ուղղուած է եղել Եւրոպային, Եւրոպական գրականութեանը. արեւելքի մեծ բանաստեղծները, որոնք այդ ժամանակ արդէն յայտնի էին Եւրոպայում, Մխիթարեաններին չեն հետաքրքրել:

Պէտք է ասել, որ ինչքան էլ Մխիթարեանները տարուած էին գրաբարով, այստեղ էլ կարելի է նկատել մտածուած քաղաքականութեան արտայայտութիւնները. այն, ինչ համարում է բարձր գրականութիւն, ասենք, նոյն նախնեաց գրականութեան յուշարձանները, թարգմանուում էր գրաբար. Բայց շատ բաներ, որոնք նախատեսուած էին երեխանների եւ աւելի զանգուածային ընթերցողի համար, թարգմանուում էին նաեւ աշխարհաբար (բնականաբար, արեւմտահայերէն): Դրանց մէջ է «Ռոբինզոն Կրուզոյի» թարգմանութիւնը, որը կատարուել է 1818 թ., Մերիմէի «Կոլոմբա» վիպակի թարգմանութիւնը: Այս վերջինը շարունակաբար տպագրուել է «Բազմավիշպի էջերում», 1863-1864 թթ.: Մանաւանդ Վիեննայի Մխիթարեանների «Եւրոպա» հանդէսում շատ են տպագրուել արեւմտահայերէն թարգմանութիւններ, եւ առհասարակ վիեննացինները աւելի հակուած են եղել դէպի արեւմտահայերէն աշխարհաբարը: Յիշեմ վիեննական հրատարակութիւններից մէկը՝ «Բարոյական վէպեր կամ տղոց սիրաը կրթելու համար պատմութիւններ» (1860): Քանի որ յիշեցինք կրթելու համար պատմութիւնները» (1860): Քանի որ յիշեցինք Մխիթարեանների մանկական հրատարակութիւնները, պէտք է Մխիթարեանների մանկական հրատարակութիւնների հրատարակչական եւ թարգմանական մշակութիւն: Նրանք չեն բաւարարուել եկան եւ թարգմանական հրատարակութիւններով: Ամբողջարեխանների համար առանձին հրատարակութիւններով: Ամբողջարեխանների համար առանձին հրատարակութիւններով: Ամբողջարեխանների համար մատենաշարեր են տպագրել երեխանների համար, որոնց մէջ ընդգրկել են ինքնուրոյն եւ թարգմանական բազմաթիւ գործեր, որոնք, իրենց համոզմամբ, օգտակար պէտք է լինէին երեխանների կրթութեան եւ դաստիարակութեան համար: Օրինակ, 1859 թի կրթութեան եւ դաստիարակութեան համար: Օրինակ, 1859 թ. Վենետիկի Մխիթարեանները սկսում են «Զբոսարան մանկանց» մատենաշարի հրատարակութիւնը, որը տեսում է մինչեւ

1867թ. Մատենաշարը հայերէն տալիս էր օտար հեղինակների այն գործերը, որոնք, Մխիթարեանների կարծիքով, կարող էին կրթական եւ դաստիարակիչ նշանակութիւն ունենալ հայ երեխանների համար: Մատենաշարի առաջին գործը Պրոսպեր Մերիմէի վիպակն էր՝ «Ծննդեան խթումը»: Մատենաշարերում ընդգրկուած գործերից շատերը այսօր մեզ կարող են անընդունելի լինել, բայց բուն մանկական մատենաշարերի գաղափարը ինքնին շատ հետաքրքրական է:

Մանկական գրականութեան երկերի թարգմանութիւնների առընչութեամբ ասենք նաեւ, որ Մխիթարեանները բաւական առողջ հայեացքներ են քարոզում իրենց ընթերցողներին: 1861թ. «Բազմավճար» տպագրում է իտալացի Կեսար Գանտոուի «Առակախօս Սերովէն» բարոյախօսական վիպակը: Թարգմանիչը՝ Նորայր Բիւզանդացին, ահա թէ ինչ է գրում թարգմանութեան վերջաբանում. «Իմ հայրենեաց մէրը ուրիշ ազգաց վրայ սէրս չպակսեցներ: Հայրենիքս իմաստու՞ն է, գեղեցի՞կ է, հարու՞ստ է, չեմ սնափառիր, ուրիշներու հայրենիքը վար չեմ զարներ: Բնաւ իմ ազգիս շահը չեմ փնտուեր առանց արդարութեան եւ բարեգործութեան, որոնք զմեզ ամենքիս իրարու հետ կը կապեն»: Հայրենասիրութեան մի հրաշալի որակ, որը, ինչպէս տեսնում ենք մեր դարի երբեմն այնքան մուալ պատմութիւնից, դեռ շատ հեռու է համընդհանուր դառնալուց:

Բայց վերադառնանք Մխիթարեանների թարգմանական սկզբունքներին: Նրանց մշակոյթի արտայայտութիւնն է նաեւ բազմալեզուեան հրատարակութիւնների առկայութիւնը Մխիթարեանների տպագրած գործերի մէջ: Նրանք ոչ միայն հայ գրականութեան իրենց համար կարեւոր գործերն են տպագրում տարբեր լեզուներով. օրինակ, Ներսէս Շնորհալու յայտնի գործը՝ «Հաւատով խոստովանիմ», դեռ 1810թ., տպագրում են վեց լեզուներով՝ հայերէն, թուրքերէն, յունարէն, լատիներէն, իտալերէն, ֆրանսերէն: 1812-ին տպագրում են արդէն տաս լեզուով, 1815-ին՝ տասնչորս լեզուով, 1862-ին՝ երեսունվեց լեզուով եւ այլն: Երկու լեզուով են տպագրում նաեւ հնում հայերէն թարգմանուած շատ երկեր՝ բնադրի լեզուով եւ հայերէն: Իրենց թարգմանածներն են տպագրում բնադրի լեզուով եւ թարգմանութեամբ: Օրինակ, Գէորգ Հիւրմիւզեանի արդէն յիշուած՝ «Պոլիկտոսի» թարգմանութիւնը տպագրուել է ֆրանսերէն բնագրով

եւ գրաբար թարգմանութեամբ: 1860 թ. Հետոնդ Ալիշանի գրաբար թարգանութեամբ, անդեպէն բնագրի հետ միասին, տպագրուում է լրող Բայրոնի յայտնի երկի՝ «Զալլդ Հարուդի ուխտագնացութեան» չորրորդ երգը: Մխիթարեանները դրանով հնարաւորութիւն են ստեղծում ընթերցողի համար համեմատել թարգմանութիւնը եւ բնագիրը եւ գալ սեփական եղրակացութեան թարգմանութեան հարազատութեան չափի մասին:

Եւս մի դիտողութիւն Մխիթարեանների թարգմանութեան մասին. նրանք թարգմանել են գերազանցապէս բնագրից, համեմատաբար քիչ կարելի է ցոյց տալ երկեր, որոնք թարգմանուել են երկրորդ լեզուից: Սա եւս պատկանում է Մխիթարեանների գործունչութեան այն կողմերին, որոնք այսօր պէտք է օրինակելի լինեն մեզ համար:

Մխիթարեանների թարգմանութիւնները ունէին նաեւ գուտ գրականագիտական արժէք: Ահա մի հետաքրքրական օրինակ: 1858 թ. Եփրեմ Սէթեանը բնագրից թարգմանում է Աւգոստինոս Երանելու աշխատութիւնները «Առանձնախօսութիւնք եւ առձեռնականք» վերնագրով: Ահա այդ գործի առընչութեամբ թարգմանիչը շատ հետաքրքրական դիտողութիւն է անում. նկատի առնելով իր թարգմանած երկի առանձնայատկութիւնները, գրում է. «նորին սիրաբուն սրտի է սեպհական՝ ոճ կրկնութեան անդադար՝ նմանաւոր կարծեցեալ բառից եւ բանից, որպէս ի Նարեկն, նոյնպէս եւ ի պիտառութիւնս Աւգոստինոսի»:

Օգտուելով Սուրէն Շտիկեանի օգտաշատ «Հայ նոր գրականութեան ժամանակագրութիւնից» (1983, էջ 230), մի փոքրիկ մէջքերում կատարեմ Սէթեանի թարգմանութիւնից. «Զի՞ եւս - տէր: Դու իսկութեամբ բարի, եւ ես չար. դու բարեգութ, եւ ես ամբարիշտ. դու սուրբ, եւ ես տառապեալ, դու արդար, եւ ես անիրաւ: Դու լոյս եւ ես կոյր. դու կենդանութիւն եւ ես մեռելութիւն. դու դեղ դարմանոյ եւ ես ախտացեալ. դու ինդութիւնն եւ ես տրտութիւն»: Դժուար չէ այս փոքրիկ հատուածի օրինակով համոզուել, որ թարգմանիչը միանդամայն իրաւացի է իր ասածի մէջ: Խնդիրը այն չէ, որ ազդեցութիւն փնտուենք: Աւելի էականն այն է, որ գիտականօրէն ճշգրիտ լուսաբանուի նարեկացու պոեմի միջավայրը. այն ստեղծուում էր ոչ անօդ տարածութեան մէջ, այլ միջնադարեան մտածողութեան եւ մշակոյթի, այդ մշակոյթի որոշակի ուղղութեան մթնոլորտում, եւ առանց

այդ միջավայրն ու մժնոլորտը պարզելու, մենք ճիշտ չենք հասկանայ հանճարեղ բանաստեղծին:

Իմ հաղորդման մէջ ես փորձեցի տալ Մխիթարեան միաբանութեան թարգմանական գործունէութեան հիմնական սկզբունքները, այնպէս, ինչպէս դրանք արտայայտուել են հիմնականում ժթ դարի նրանց թարգմանութիւններում։ Սրանով Մխիթարեանների թարգմանութեան խնդիրը չի սպառւում. դա բանասիրական լուրջ ուսումնասիրութեան նիւթ է, որով ես կարծում եմ, ոեու կը զբաղուեն (ինչպէս նաեւ կը զբաղուեն առհասարակ հայ թարգմանութեան պատմութեան խնդրով, առանց որի մեր գրի ու մշակոյթի պատմութիւնը ամբողջական չի լինի):